Վերապատրաստող կազմակերպություն

Գավառի Ավագ դպրոց

Հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստման դասընթաց

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Սովորողի մտածողության զարգացման ձևերը պատմության դասավանդման գործընթացում

Հետազոտող ուսուցիչ՝ Գայանե Խանամիրյան

Ղեկավար՝ Ամալյա Զոլյան

Գավառ 2022թ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն ------- ---------- 3

1. Նոր մարտահրավերներ պատմութուն դասավանդողին------- 4

2. Քննադատական, ստեղծարար մտածողության զարգացման ռազմավարություններ.փորձարկված դասերի վերլուծություն----- 8

Եզրակացություն ---------- 15

Օգտագործված գրականության ցանկ ---------- 18

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ըստ Հանրակրթության պետական նոր չափորոշչի /հաստատված՝ 09.02.2021/ կրթության բովանդակության հիմքում դրված է կարողունակահեն մոտեցումը, ըստ որի ուսումնական գործընթացը պետք է կազմակերպել այնպես, որ ուսումնառության գործընթացում ձեռք բերված գիտելիքները , ձևավորված կարողությունները , հմտությունները, արժեքներն ու դիրքորոշումները հնարավորինս կիրառվեն առօրյա կյանքում: Տարբեր իրավիճակներում սովորողները կարողանան արագ և արդյունավետ կողմնորոշվել, արձագանքել, առաջարկել համապատասխան լուծումներ: Ուսումնառության գործընթացում սովորողների մոտ վերոհիշյալ կարողունակությունները կարող են ձևավորվել ու զարգանալ ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի , գործունեության տեսակների, մեթոդների կիրառման արդյունքում:

21–րդ դարը կրթական համակարգի համար դարձավ տեխնոլոգիական նորամուծությունների փորձարկումների և նախադեպը չունեցող մարտահրավերների դիմագրավման տարի:

Կրթական համակարգը ստիպված էր դիմագրավել պարտադրված պատերազմին: Այդ օրերին գիտակցվեց կրթության, որպես գոյության առաջնահերթ պայմանի անրհաժեշտությունը և ակնհայտ դարձան տարիներ ի վեր թույլ տրված բացթողումները, թերացումները:

Հերոսների կյանք արժեցած, սրբագործված հայրենիքի սահմաններն անրահաժեշտ է պահել կրթված հասարակություն ձևավորելով, խելամիտ ու հեռանկարային դիվանագիտություն վարելով : Անցյալի հաղթական պատմությամբ սերունդներ կրթելը հաղթողի կարգավիճակի փոխակերպված պայմաններում կրթության մեջ թիրախային է դարձնում կրթական որակի բաձրացման պահանջը: Պատմության դասավանդման առջև դրված վերաբերմունքը ուղիղ պատճառահետևանքային կապի մեջ է Արցախյան պատերազմի ցավալի ելքի հետ:

Կարևոր են հայոց պատմության այն դրվագները, որոնք և որոնց միջև առկա պատճառահետևանքային կապերը ուսումնասիրելով՝ հնարավորություն է ստեղծվում հասկանալու Հայաստանի ներկա վիճակի պատճառները: Պատմական կարևոր հրադաձությունները մեկնաբանելու միջոցով կարելի է բացահայտել նոր, բարենպաստ հնարավորություններ՝ սեփական կյանքը , խոսքը, գործեությունը կարգավորելու համար: Օրինակները բազում են . Ներսես մեծի գործունեության օրինակով հնարավոր է հասկանալ բարեգործության իրականացման նոր հնարավորություններ: Արքաներ Արամի, Արտաշես 1-ի, Տիգրան Մեծի, Աշոտ 1-ինի, Լևոն Մեծագործի գործերի օրինակներով կարելի է ուսումնասիրել իմաստուն,պետականամետ առաջնորդին հատուկ գործունեության և անձնային որակների հետաքրքիր օրինակներ:

Այսպիսով, կրթության կազմակերպումը վերակառուցվում է ոչ միայն բովանդակությամբ, այլ ուսումնական միջոցների և մեթոդների առումով: Կրթության դերն աճում է վերածվելով մի գործոնի , որը նպաստում է հասարակության մեջ մարդու դերի առավել արժեվորմանը՝ զարգացնելով

համակեցություն , հանդուրժողականություն և արժեքային այլ որակներ: Հասկանալի է , որ ոչ բոլոր աշակերտներն են, որ կարող են դառնալ գիտնականներ, բայց դառնալ ինքնուրույն , մտածող մարդ, ով ընդունակ է վերլուծել իր արարքները , վարքը , խնդիրները , իրացնել իրեն շրջակա աշխարհում , պարտավոր է: Հետևաբար, դասավանդման մեջ ուսուցիչներս պետք է կիրառենք ուսուցման ակտիվ ճանաչողական , քննադատական մտածողությունը զարգացնող խնդիրներ լուծելու կարողությունների և հմտությունների ինքնուրույն ձեռքբերմանը նպաստող ռազմավարություններ:

Մեր կյանքը մեծապես կախված է մեր մտածողության որակից. մտքեր արտահայտելիս շատ կարևոր է հիմնավորումներ տալը, դիրքորոշում պաշտպանելը, տեղեկատվության աղբյուրները նշելը և այլն:

1.1.1. Նոր մարտահրավերներ պատմություն դասավանդողին

Հետազոտության նպատակները և խնդիրները կվերաձևակերպենք որպես մարտահրավերներ

Մարտահրավեր 1

Պատմության դասավանդման մեջ կարևորել ոչ թե առարկայական փաստային իմացությունը, որը մեր կրթական միջավայրի ամենամեծ խնդիրն է, այլ որպես նպատակ կրթության բովանդակության մեջ դնել սովորողի հմտությունների / վերլուծել, համադրել, արժեվորել, հաղորդակցվել/ ձևավորման փունջը: Չէ որ դասարանը ինքնին միկրոհասարակություն է , ձևավորված հմտությունները թույլ կտան հետագայում սովորողին հասարակության մեջ ազատ ինքնադրսևորվել:

Մարտահրավեր 2

Պատմության ոչ արդյունավետ դասավանդումը ունի վտանգներ, այն գործ ունի մարդու հույզերի և աշխարհայացքի հետ ու կարող է դպրոցից ձևավորել մտածողության սխալներ: Սովորողների մեջ ձևավորվում է երկու հիմնական կարծրատիպ ՝ մեղադրողի և մեղավորի կեցվածքներ: Դրանք հետո տեղափոխվում են կյանք , հասարակական հարաբերություններ: Նույնիսկ ամենազգայուն թեմաներ անցնելիս / օրինակ՝ օտար տիրապետություններ, ցեղասպանություն/ չպետք է նվազեցնել դասարանի վերլուծականությունը: Արդյունքում կունենանք վերլուծական թույլ մտքով անհատներ, որոնք փնտրում են միայն մեղավորներ:

Մարտահրավեր 3

Դասավանդման ժամանակ կիրառել բազմատեսանկյուն մոտեցման ՝ քննադատական մտածողության սկզբունքը և կարևորել առանձին սոցիալական խմբերի պատմության լուսաբանումը;

Մարտահրավեր 4

Դասավանդման գործընթացում պատմական ժամանակի ընկալման կողքին դնել պատմական հիշողությունը, քանի որ այն ոչ միայն պատմական անցյալի նկատմամբ մեր ներկայացրած պահանջն է , այլ նաև ապահովում է պատմական անցյալի , ներկայի և ապագայի կապը, քանի որ ֆրանսիացի հոգեբան Գյուստավ Լեբոնի դիպուկ բնութագրմամբ «ժողովուրդների խաղաղ ոչնչացումը սկսվում է պատմական հիշողության կորստից» :

Մարտահրավեր 5

Պատմության ուսուցմանը տալ նպատակասլացություն. պատմական երևույթները կապել առօրյա կյանքի հետ, որպեսզի սովորողները ոչ միայն պատմական գիտելիք ձեռք բերեն , այլև անցյալի փորձի իմաստավորման հիման վրա կարողանան արժևորեն ներկան, կանխորոշել ապագան:

Մարտահրավեր 6

Պատմության ուսումնառության վերջնարդյունքներից մեկը ժամանակի զգացողության զագացումն է , ինչպես նաև գիտակցումը , թե ինչպես է ժամանակի ընթացքում փոխվում մարդկանց մտածելակերպը: Պատմություն հասկանալու բարդություններից մեկն այն է , որ պետք է ուսուցիչը սովորեցնի մտածել սովորողին իր արժեհամակարգից ու համոզմունքներից դուրս : Սովորողը գիտակցի , որ անցյալի գործողություններն ու դերակատարներին պետք է դիտարկել նրանց տեղանքի և ժամանակի համատեքստում, ոչ թե ըստ այսօրվա չափանիշների : Ուսուցիչը պետք է սովորեցնի դիտարկել , թե ինչ պարտավորություններ ունենք մենք այսօր անցյալի մարդկանց հանդեպ, օրինակ ՝ ոգեկոչման կամ անցյալում գործած սխալների տեսանկյունից:

Մարտահրավեր 7

Պատմական գիտելիքի և ընկալման կարևոր մաս է բացատրությունն առ այն , թե ինչու են պատմական իրադարձությունները տեղի ունեցել: Սովորողների մոտ պատճառահետևանքային մտածողությունը զարգացնելու ռազմավարությունները ուսուցչի դասավանդման կարևոր ուղղություններից պետք է լինի:

Մարտահրավեր 8

Պատմության դասագրքերը լրացնելու , դրանց այլընտրանք ունենալու իմաստով կարևորվում է պատմական աղբյուրներ պարունակող տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործումը, որոնք ինտեգրված գիտելիք հաղորդելու և սովորողների հիմնարար գիտելիքներ ձևավորելու կարևորագույն միջոցներ են : Սովորողները պետք է տեղյակ լինեն, որ միևնույն աղբյուրները կարող են կիրառվել տարբեր հարցադրումների, փաստարկների ու վերլուծությունների համար: Պետք է դասարանում պատմական աղբյուրներից հաճախ օգտվենք և խրախուսենք ամենատարբեր փորձարկումները դրանց հետ: Պետք է հնարավորինս «բաց» առաջադրանքներ կիրառենք , որոնց շրջանակում սովորողները կկարողանան աղբյուրների հիման վրա հարցադրումներ առաջ քաշել և զարգացնել:

Մարտահրավեր 9

Պատմության դասավանդման մեջ կարևորել պատմական գործընթացների վրա ներազդող այնպիսի գործոնների հետազոտումը, ինչպիսիք են սոցիալ–տնտեսական , աշխաարհագրական, աշխարհաքաղաքական, կրոնական, ազգային – հոգեբանական գործոնները:

Պատմության ուսուցչին ներկայացվող մարտահրավերները լուծելու հմտություն ու կարողություն , մասնագիտական և մանկավարժական որակներ ունեցող ուսուցիչը **կառուցողական մեթոդով աշխատող ուսուցիչն** է :

1.1.2. **ԿԱՌՈՒՑՈՂԱԿԱՆ ՄԵԹՈԴՈՎ ԱՇԽԱՏՈՂ ՈՒՍՈՒՑԻՉԸ**

Այսօր գնալով ավելի ու ավելի է կարևորվում կառուցողական մեթոդներով աշխատող ուսուցիչը :Արդյոք դա ուսուցչի նո՞ր որակ է, և եթե այդպես է , մատչելի՞ է արդյոք բոլորին: Փորձենք բնութագրել կառուցողական մեթոդներով աշխատող ուսուցչին՝ որպես միջնորդ սովորողների և միջավայրի միջև, սովորողների մտածողությունը զարգացնող մարզիչ:

1. խրախուսում և ընդունում է աշակերտների ինքնուրույնությունն ու նախաձեռնությունները

2. փոխներգործուն և ֆիզիկական ն միջոցներին զուգահեռ կիրառում է նաև չմշակված , նախնական տվյալներ և սկզբնաղբյուրներ

3. առաջադրանքները ձևակերպելիս կիրառում է ճանաչողական եզրաբանություն / տերմինաբանություն/, օրինակ՝ «դասակարգել» , «վերլուծել», «կանխատեսել», «ստեղծել»:

4. թույլ է տալիս , որ աշակերտներն իրենց պատասխաններով ուղղորդեն դասը, վերափոխեն դասավանդման ռազմավարությունները, մեթոդներն ու դասի բովանդակությունը:

5. որևէ գաղափարի , հասկացության մասին սեփական պատկերացումն աշակերտներին հաղորդելուց առաջ նախ պարզում է տվյալ հասկացության մասին աշակերտների գիտելիքներն ու կածիքը:

6. խրախուսում է աշակերտնորին՝ երկխոսության մեջ մտնելու թե՛ իր և թե՛ միմյանց հետ:

7. ա/ տիրապետում է «խելացի » հարցադրումներ անելու պատվիրաններին

բ/ քաջալերում է հարցադրումները՝ աշակորտներին առաջադրելով բովանդակային և բաց հարցեր , ինչպես նաև դրդում է նրանց հարցեր տալ միմյանց. հարցեր տալու առավելությունը նոր պատասխան գտնելն է:

8. ձգտում է լրացնել և զարգացնել աշակերտներին նախնական պատասխանները:

9. աշակերտներին ներգրավում է այնպիսի փորձառությունների մեջ, որոնք հակասություններ են ծնում իրենց առաջադրած նախնական վարկածների հետ, իսկ այնուհետ խրախուսում է դրանց շուրջ ծավալված քննարկումները:

10. հարցեր տալուց հետո աշակերտներին մտածելու ժամանակ է տալիս ՝ սպասելով պատասխանին :

11.աշկերտներին փոխհարաբերություններ կառուցելու և փոխաբերություններ ստեղծելու ժամանակ է տալիս:

12. ուսումնառության պարբերական մոդելի / learning cycle model/ հաճախակի օգտագործման միջոցով խթանում և զարգացնում է աշակերտների բնական հետաքրքրասիրությունը:

2. Քննադատական, ստեղծարար մտածողության զարգացման ռազմավարություններ.փորձարկված դասերի վերլուծություն

Ներկայացնենք մեր կողմից փորձարկված և փորձարկվելիք մեթոդներ, հնարներ

«Սովորեցրու քեզ մտածել»

Էդվարդ Դե Բոնո

Դե Բոնոյի «Վեց մտածող գլխարկները»մեթոդ



Մտածողությունը շատ հաճախ փոխարինվում է գիտելիքով. ի՞նչու մտածել, երբ կարող ես պարզապես հիշել ճիշտ պատասխանը: Ավանդական կրթական համակարգի այս բացերը «փակում է » Դե Բոնոյի առաջարկած մտածողության գործընթացի վրա կենտրոնացումը:

Դասի պլանավորման մեջ հստակ առանձնացնում եմ վերջնարդյունքին հասնելու խնդիրների ձևակերպումն ու լուծումը :Խնդրի նկատմամբ մոտեցումը բաժանում եմ փուլերի՝ նպատակ դնելուց մինչև անհրաժեշտ գործողություններ. խնդրի լուծումը պատասխանների հոգնեցուցիչ որոնումից վերածվում է ստեղծագործական հետաքրքիր գործընթացի:

Փաստ է, որ մարդիկ տարբեր կերպ են օգտագործում իրենց մտածողության ներուժը և տարբեր կերպ գնահատում: Կիրառելով մեթոդը՝ ցանկանում եմ , որպեսզի իմ սովորողները վերագնահատեն իրենց մտածողությունը , սովորեցնեւմ եմ միտքն աշխատեցնել նոր՝ ստեղծագործական մակարդակի վրա: Այս մեթոդը սովորողների ուշադրությունն է ուղղորդում. հարկավոր է ուշադրություն դարձնել նույնիսկ մանր բաների վրա:

Այս մտածողության եղանակը գործնական խնդիրների լուծման ընթացքում օգնում է հաղթահարել զգացմունքային խուճապային և խառնաշփոթության բարդույթները: Մեթոդը հնարավոր է դարձնում կառուցվածքային հաղորդակցությունը խմբում, թիմում, սովորողների միջև , շփվում են առանց «ճակատների բախման»:

Բոլոր սովորողները կարող են մտածել , ուսուցիչը դադարում է լինել այն գիտելիքի անմատչելի կրողը, որը աշակերտը չունի: Ուսուցչի դերը մարզելն է: Դե Բոնոյի ուսուցումը օգնում է զարգացնել ինքնահարգանքը, վստահությունը սեփական ուժերի և խնդիրները ինքնուրույն լուծելու ունակության նկատմամբ: Արագ փոփոխությունների մեր դարաշրջանում այս գործոնի կարևորությունը արժևորվում է : Օրինակ , գաղափարի գնահատման բաց մոտեցումը , որը ներառում է դրա բոլոր ասպեկտների դիտարկումը, բյուրեղանում է և սովորողը ձգտում է տեսնել գաղափարի և՛ դրական , և՛ բացասական , և՛ հետաքրքիր կողմերը:

«Վեց մտածող գլխարկները» հավանաբար Էդվարդ Դե Բոնոյի մշակած ամենահայտնի մտածողության մեթոդներից մեկն է : Ի՞նչ է կատարվում , երբ մարդ մտածում է . մտքերը հորդում են , կուչ են գալիս ,մի գաղափարը հակասում է մյուսին...

Դե Բոնոն որոշեց այս բոլոր գսրծողությունները բաժանել 6 տեսակի , մտածելակերպը կապելով գունավոր գլխարկներ հետ : Սովորողը մտովի դնելով որոշակի գույնի գլխարկ , տվյալ պահին ընտրում է մտածողության տեսակը, որը կապված է դրա հետ: Այս մեթոդը ես օգտագործում եմ խմբային աշխատանքի ժամանակ, ստեղծագործական աշխատանքի ժամանակ, որտեղ կարևոր է տրամաբանությունը զատել զգացմունքներից և հանդես գալ նոր գաղափարներով : 6 գլխարկը հիմնված է զուգահեռ մտածողության գաղափարի վրա: Ավանդական մտածողությունը հիմնված է կարծիքների բախման վրա, սակայն Դե Բոնոյի մոտեցմամբ տարբեր տեսակետները ոչ թե բախվում են , այլ գոյակցում: Սա **զուգահեռ մտածողություն է** : Մտքի գործընթացը բաժանում

ենք մեր մտածողության տարբեր շերտերի վրա: Վերջում բոլորը ի մի են բերվում ու ստանում ենք «գունավոր մտածողություն» :

Սպիտակ գլխարկը ներկայացնում է մերկ փաստեր , հույզեր , դատողություններ չկան :

Սև գլխարկը ազատություն է տալիս քննադատական գնահատականներին, վախերին, զգուշությանը: Տեսնում է ռիսկերն ու որոգայթները և քարտեզագրում : Ամեն ինչ սև լույսի ներքո է ներկայացնում:

Դեղին գլխարկը պահանջում է սովորողից խնդրո առարկա գաղափարից արժանիքները, առավելություններն ու դրական կողմերը տեսնել : Այն սևի հակառակորդն է , լավատեսը:

Կանաչ գլխարկի տակ սովորողը նոր հայացք է նետում իրավիճակին և առաջարկում շատ անսպասելի, ոչ ստանդարտ գաղափարներ:

Կարմիր գլխարկ կրող սովորողը արտահայտում է զգացմունքներ՝ առանց բացատրությունների: Այն կարճատև են կրում / առավելագույնը՝ 30 վայրկյան/:

Կապույտ գլխարկը տարբերվում է մյուս գլխարկներից նրանով, որ այն կրող սովորողը խմբավար է , կառավարում է , ամփոփում , բացահայտում նոր նպատակներ : Դասի արդյունքներն ամփոփվում են կապույտ գլխարկի տակ:

Այսպիսով , Դե Բոնոյի մեթոդը ճանաչում է թեմայի վրա աշխատանքի բոլոր բաղադրիչների կարևորությունը՝ փաստեր, հույզեր, քննադատություն, ստեղծարարություն , նոր գաղափարներ ՝ փունջը ներառելով դասապրոցեսի մեջ:

Ստորև ներկայացնում եմ վերոհիշյալ մեթոդով փորձարկված դասի պլանավորումը հետևյալ հղմամբ

ԿԵՐՊԱՐԱՅԻՆ ՔԱՐՏԵՐ

Ներկայացնում ենք սովորողների քննասիրությունը, պատմական ակտիվ մտածողությունը զարգացնող ուսումնական ռազմավարություններից «կերպարային քարտերը»: Կերպարային քարտը հրաշալի միջոց է պատմական կարևոր իրադարձությունները «ներսից» ՝ տարբեր կերպարների դիտանկյունից ուսումնասիրելու համար: Քարտը ներկայացնում է տվյալ իրադարձության կերպարների մտադրությունները, հուզական վիճակները, տեսանկյունները: Կերպարային քարտը կիրառելու նպատակով.

1. ընտրում եմ պատմական իրադարձությունը. դիցուք՝ Ցարիզմի գաղութային քաղաքականությունը 20–րդ դարի սկզբին;

2. սովորողներին տրամադրում եմ այդ իրադարձության դերակատարների ցանկը

  Դուք, որպես Ամենայն Հայոց կաթողիկոս, ընդդիմացաք եկեղեցու գույքի բռնագրավման 1903թ հունիսի 12-ի օրենքին: Ի՞նչ եք զգում, ինչպե՞ս կփաստարկեք օրենքի կիրառման վտանգավորությունը:	 Դուք ռուս ցար Նիկոլայ 2-րդն եք: Կառավարչապետ Գոլիցինը սադրանքով շարժվեցիք: Ձեզ տեղեկացրին, որ Հայոց եկեղեցին տիրապետում է բանկային մեծ հաշիվների, շարժական և անշարժ գույքի: Հայ երիտասարդության մեջ հեղափոխական գաղափարներ է տարածում՝ Ռուսական կայսրությունից անկախանալու: Նկարագրեք, թե ի՞նչ եք զգում, որն է խնդրի լուծման Ձեր տարբերակը, ինչպիսի քայլեր կձեռնարկեք այդ ուղղությամբ:

 Դուք ՀՅԴ հիմնադիր անդամ Ռոստոմի / Ստեփան Զորյան/ մայրն եք: Ձեզ տեղեկացնում են , որ Ձեր որդին գույքի բռնագրավման դեմ պայքարի կազմակերպիչ «Ինքնապաշտ կենտրոնների կոմիտեի »առաջնորդներից է : Նկարագրեք Ձեր հույզերն ու բերեք կարճաժամկետ ու երկարաժամկետ պատճառներ, որոնք, ըստ Ձեզ դրդել են Ձեր որդուն իրականացնել այդ քայլը:	 Դուք գույքի բռնագրավման դեմ պայքարած և աքսորված Դսեղ գյուղի գյուղացիներից մեկն եք: Վերադարձել եք աքսորից: Ինչպիսի՞ զգացողություն կունենայիք օրենքի չեղարկման մասին լուրը լսելով : Ըստ Ձեզ , որոնք էին դրա պատճառները: Պայքարի 2 տարիները ի՞նչը փախեցին Ձեր աշխարհայացքում:

Սովորողների կողմից իրենց կերպարների վերլուծությունը ներկայացնելուց հետո քննարկում ենք մի շարք հարցեր;

Օրինակ՝

- Ու՞մ համոզմունքներն էին ամենաշատը փոփոխվել:
- Ի՞նչ քայլեր կարելի էր ձեռնարկել այս կամ այն կերպարի « փոխարեն»:
- Ինչպե՞ս էին կերպարները փոխազդում միմյանց վրա:
- Ո՞ր քայլերը կարող էին տվյալ իրադրությունն ավելի արդյունավետ հանգուցալուծել:

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՌԵՂԾՎԱԾԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

Այս ռազմավարությունը խթանում է սովորողների պատճառահետևանքային տրամաբանությունը , սովորողները սկսում են ավելի ուշադիր լինել պատմական իրադարձությունների պատճառահետևանքային կապերին: Սովորողներին տալիս եմ Պապ թագավորի պատմական ժամանակաշրջանում գործող խուզարկուի դեր: Նրանք պետք է ինքնուրույն կամ խմբով «բացահայտեն» Պապի առեղծվածային սպանության հանգամանքները: Ներկայացնում եմ առեղծվածային իրադարձությունը , որ պետք է բացահայտել:

1. Սովորողներին տրամադրում եմ պատմական աղբյուրներ՝ Պապ թագավորի սպանությունը ըստ 4–րդ դարի պատմիչներ Փավստոս Բյուզանդի և հռոմեացի պատմիչ Ամմիանոս Մարկելինոսի: Որքան տարբերակված և նույնիսկ հակասական լինեն աղբյուրները , այնքան ավելի բարենպաստ հնարավորություն կստեղծվի մտածելու համար:

2. Մի շարք բացահայտող հարցեր եմ տալիս, որոնք կօգնեն մանրամասնել տեղի ունեցած իրադարձության պատճառներն ու հետևանքները

Հարցերի օրինակներ՝

- Որտե՞ղ սպանվեց Պապը; Ինչու՞ սպանվեց հենց այդ վայրում:
- Շահագրգիռ ինչ կողմեր կային Պապ թագավորի սպանության մեջ: Գտեք կասկածյալներին:
- Ինչու՞ սպանեցին Պապ թագավորին:
  Այսպիսով սովորողները կարողանում են բացահայտել պատճառահետևանքային փաստարկներ՝ վերլուծական տարբերակումներով և աստիճանակարգմամբ, ինչպես նաև կկարողանան վերլուծել ու գնահատել այլոց փաստարկները:
  Ստորև ներկայացնում եմ փորձարարական դասի օրինակ

ՔԱՐՏԵԶԻ ՄԻՋՈՑՈՎ ՈՒՂԱՈՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Այս ռազմավարությունն օգտակար է պատմական կոնկրետ կերպարի կամ խմբի ուղևորության ճանապարհն ուսումնասիրելու համար:

Սովորողներին տրամադրում ենք պատմական հավելյալ աղբյուրներ . օրինակ՝ պատմիչի նկարագրություն , լուսանկար, հատակագիծ: Քննարկում ենք ուղևորության կազմակերպման համար անհրաժեշտ ռեսուրսները, դժվարությունները, հավանական զգացողությունները, հնարավոր ուղիների արդյունավետությունը և այլն:

«Բագրատունիներ» թեման ամփոփելիս փորձարկել եմ « Քարտեզի միջոցով ուղևորության վերլուծություն» ռազմավարությունը: Դաս –ճամփորդությունը սկսել ենք Ախուրյանի գետանցումով՝ Գյումրիից 30կմ հարավ– արևմուտք: Խմբերը կողմնորոշվում էին Անիի հատակագծով:

Տիեզերական մայրաքաղաքի 40 դռներից / Դվինի, Կարսի , Ավագ, Իգաձոր և այլն / ընտրեցին Ավագ դուռը: Անի մտնելու անցաթուղթը Ավագ դռան նկարագրությունն էր, իսկ ճամփորդության վերջնակետը՝ Մայր Տաճարը: Վերջնակետը պատահական չէր մտածված, քանզի հոյատեսիլ այդ կառույցը Հայոց աշխարհի Հզորությունն ու Միասնությունն էր շեշտադրում , ազատության կամքը , գեղեցիկի երազանքը: Տաճար հասած աշակերտների խնդիրը այն նկարագրելն էր և Բագրատունիների տան գլխավոր ճարտարապետ Տրդատին ներկայացնելը: Աշակերտների նկարագրությունից հետևեց, որ իրար ամուր գրկած 4 հզոր սյուները բոլոր խլված հողերի ու իշխանությունների միավորման ձգտումն են մարմնավորում: Դասի տրամաբանական ավարտը հզոր Հայրենիք ունենալու գաղափարն էր:

Սովորողները հատակագծի վրա տեղանշումներ էին կատարում , հատակագծի վրա նշագրում հանդիպած եկեղեցիները ,միջնաբերդը, շահաստանը , ուրվագծում երկշարք պարիսպները և այլ նշագրումներ: Սովորողները հընթացս հաղթահարում էին միմյանց տրվող հարց–խոչընդոտները՝ պարզ հարցերից ընդհուպ գնահատող, ստեղծագործական, գործնական հարցեր:

Քարտեզ կազմելու ընթացքում կամ ավարտին կարող ենք քննարկել, օրինակ, հետևյալ հարցերը.

– Տվյալ ժամանակներում օգտագործվող տրանսպորտային ինչպիսի միջոցներ կառաջարկեիք:
– Համեմատենք հատակագծի անցյալ և ներկա տարբերակները:

Այս ռազմավարությունը հրաշալի միջոց է աշխարհագրական գիտելիքը պատմության արդյունավետ ուսուցման մաս դարձնելու, պատմության աշխարհագրական ընկալում ձևավորելու համար:Այս մեթոդը փորձել եմ հարստացնել՝ խելացի հարցեր կազմելու հմտություններ սովորեցնելով իմ սաներին:

- Ուսուցչի հարցման կարևորությունը սովորողների մտածողության զարգացման մեջ

Ինչու է կարևոր ուսումնառության մեջ նախապես պլանավորված հարցադրումների կիրառումը:

Հարցերը խթանում են աշակերտների հետաքրքրասիրությունը, ստեղծում են կարծիքների և լուծումների բազմազանություն: Ճիշտ ձևակերպված հարցադրումները օգնում են հասկանալու աշակերտների ուժեղ և թույլ կողմերը, խթանում են բարձր կարգի մտածողությունը, ուսումնական գործընթացը դարձնում են իմաստավորված և վերահսկելի:

Ճիշտ ձևակերպված հարցերն ունեն հետևյալ գործառույթները՝

- Հետաքրքրել, ներառել աշակերտներին, ստուգել նախորդ գիտելիքի ընկալումը
- Խթանել նոր գիտելիքի ստացումը և ըմբռնումը՝ հիմնված առկա փորձառության և գիտելիքների վրա
- Կենտրոնացնել աշակերտի ուշադրությունը նոր հասկացությունների և հիմնախնդիրների վրա
- ՈՒղղել աշակերտների մտածողությունը թանձրացականից և փաստականից դեպի վերլուծականը և քննականը
- Ուղղորդել աշակերտների ուսումնառությունը պլանավորված հաջորդականության ՝ շեշտադրելով առանցքային հասկացությունները
- Խթանել պատճառահետևանքային կապի հասկացումը, խնդիրների լուծումը ,հիպոթեզների առաջադրումը
- Խթանել սեփական ուսումնառության մասին մտածելու գործընթացը՝ սովորեցնել սովորել,սովորեցնել մտածել մտածելու մասին:
- Հավելենք նաև, որ արդյունավետ հարցադրումը գնահատման առանցքային գործիքներից է:

- Ինչու է կարևոր սովորողների՝ խելացի հարցադրումներ անելու հմտությունների ձևավորումը:

Սովորողների մտածողությունը ակտիվ է , երբ իրենք են հարցեր կազմում: Կա մեթոդական հնար, որ կոչվում է Բենջամին Բլումի «Երիցուկ». քննադատական մտածողությունը զարգացնող լավագույն մեթոդներից է: Մեթոդի կիրառման համար տեքստի բովանդակությանը ծանոթանալուց հետո գրատախտակին փակցվում է տարբեր գույնի թերթիկներ ունեցող ծաղիկ: Ծաղկի յուրաքանչյուր թերթիկի հետնամասում գրում ենք հարցի որևէ տեսակ, կարող ենք գրել նաև հուշում, թե ինչպես է այդ հարցը կազմվում: Եթե ընտրում է, օրինակ, կարմիր գույնը, որի հետնամասում գրված է պարզ հարցեր, կազմում է պարզ հարցեր տեքստի վերաբերյալ: Եթե ընտրել է նարնջագույն թերթիկը, որը մեկնաբանող հարց է պահանջում՝ ինչու՞ հարցով է նախադասություն կազմվում: Հստակեցնող հարցերով նախադասությունը կազմվում է «Ճի՞շտ եմ հասկանում, որ...» սկզբնամասով: Եթե ընտրել է գնահատող հարցեր պարունակող թերթիկը, սովորողը պետք է հորինի գնահատող հարց՝ «լավ էր, թե վատ...» սկզբնամասով: Երկնագույն թերթիկի հետնամասում գրում ենք ստեղծագործական հարցեր «ի՞նչ կլինի, եթե...» սկզբնամասով: Կարող են հարց հորինել բնագրի վերաբերյալ:

Վերջապես, վերջին թերթիկի վրա գրում ենք պրակտիկ հարցեր «ինչպես կվարվեիք դուք, եթե ...»

Հարցերի օրինակներ՝ կազմված Բլումի մեթոդով:

Թեմա՝ «Ավարայրի ճակատամարտ»

1. Ե՞րբ է տեղի ունեցել Ավարայրի ճակատամարտը:

2. Ինչու՞ իշխանները առերես ընդունեցին զրադաշտականությունը;

3. Ի՞նչ պատասխան կտայիք պարսից արքային :

4. Ի՞նչ կարող էր տեղի ունենալ , եթե Վասակ Սյունին չհայնվեր Տղմուտ գետի աջ ափին:

5. Ի՞նչ ռազմամթերք կնախագծեիք , որը կօգներ հայերին մարտնչելու հարբած փղերի դեմ:

6. Եթե դուք լինեիք փաստաբան , ինչպես կպաշտպանեիք Վասակ Սյունիին:

7. Պատկերացրու՝ Արշակ 2–րդ թագավորն ես : Ի՞նչ պայմաններով կկառուցես , կամ չես կառուցես քաղաքը, որպեսզի չսրես հարաբերությունները իշխանների և կաթողիկոսի հետ:

Երբ հարցախույզ են թե՛ ուսուցիչը, թե՛ սովորողը՝ ուսումնառության «տանգոն» ստացված է:

Եզրակացություն

Ինչպես լավագույնս պատրաստենք մեր երեխաներին ապագայում արդյունավետ գործելու, ինքնուրույն մտածելու (ինչպես կասեր ԴԵ Բոնոն՝ «տուփից դուրս» մտածել), միմյանցից անկախ մտածելու: Ուսումնառության ընթացքում իմ կողմից կիրառված ռազմավարությունները սովորողների միջև արդյունավետ փոխազդեցություն են կազմակերպում, համագործակցության ակտիվ միջավայր է ստեղծվում: Ձևավորվում է խնդիրները միասին լուծելու կարողություններ, սովորողները կարողանում են միասին փոխել մտածողության ուղղությունները, երկխոսության մեջ մտնել, հարթել կոնֆլիկտները: Եվ այս որակները դաս–դասարանային համակարգից հետագայում տողափոխվում են հասարակական հարաբերություններ: Բազմատեսայնկյում մտածողությունը թույլ է տալիս ուրիշի տեսակետը ըմբռնելու, իրողությունները տարբեր դիտանկյուններից քննարկելու ճանապարհով հասկանալ ներկա աշխարհի բազմակերպությունը:

Հավելված

Քննադատական մտածողությունը արդյունք է



Քննադատական մտածողության տեխնոլոգիան ակտիվ մանկավարժական տեխնոլոգիա է, քանի որ դրակիրառումըհնարավորություն է տալիս սովորողներին լինել ուսուցման գործընթացի ակտիվ մասնակից


Քննադատական մտածողությունը քննական դատողություն է
Քննադատական մտածողությունը ներառում է մտավոր բարդ գործընթաց, որը սկսվում է ինֆորմացիայով և ավարտվում է որոշման կայացմամբ
ժամանակ
հնարավորություն
բազմազանություն
ներևգրավում
համարձակություն
Հարգանք
Արժևորում

Օգտագործված գրականության ցանկ

1. Ժամանակակից մանկավարժական մոտեցումները գործողության մեջ

   Երևան 2005, Նոյյան Տապան

2. Ուսուցման արդյունավետ հնարներ

   Երևան 2020

3. «Պարադիգմա » կրթական հիմնադրամ /2020/

Գիրք պատմության ուսուցման. ինչու՞, ինչպես

4. Джефф Петти , Современное обучение, Москва, «Ломоносовь» 2010
5. И.В. Муштавинская «Технология развития критического мышления на уроке и в системе подготовки учителя»
6. Э. Де Боно Шесть шляп мышления, 1985. Москва
7. Կրթության արդի հիմնախնդիրներ. Դեպքերի ուսումնասիրություններ. Հեռանկարներ, Երևան 2005